ՆՈՐ-ԴԱՐ

№ 80 ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի 8 Մայիսի 1896 Չորեքշաբթի 8 Մայիսի ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 80

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., համարը՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ

ԿԻՐԱԿԻ, մայիսի 12-ին, Վանքի աւագ եկեղեցում, ս. պատարագից յետոյ, կըկատարուի

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉՈՒՄԵԱՆԻ

հոգեհանգիստը։

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրութիւն։

ՄԻՔԱՅԵԼ ԽԱՉՈՒՄԵԱՆԸ ցաւօք սրտի յայտնում է իր անփոխարինելի եղբօր՝

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉՈՒՄԵԱՆԻ

մահը, որ տեղի է ունեցել ամսիս 4-ին Լայպցիգի հիւանդանոցում, և խնդրում է իր եղբօր ընկերներին, բարեկամներին և համակրողներին շնորհ բերել ամսիս 12-ին Գանձակի սուրբ Լուսաւորիչ եկեղեցին, ուր հոգեհանգիստ պէտք է կատարուի։ 4-1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Էլի քահանայական խնդիրը։
Վաղամեռի յիշատակին։
Քրոնիկոն.—Միւռոնի օրհնութիւն և եպիսկոպոսների ձեռնադրութիւն։ Աղափիրեան եպիսկոպոսը։ Գ. Ճեմարանի ուսուցիչ վարդապետները։ Ս. Էջմիածնից։ Փոխ այցելութիւն Երևանի նահանգապետին։ Մարդասէր գնացքները։ Թազմա-վիրական ճանապարհ։ Գաւառական ուսուցիչներ։ Մաջարների նախկին հայրենիքը։ «Հայկական վէպ»։ Նաւթի սակագները։ Շամախուց։ Հին-Նախիջևանից։
Նամակներ խմբագրութեան (2 հատ)։
Մատենախօսութիւն—«Ազգագրական Հանդէս»։
Թղթակցութիւններ.—Նամակ Պարսկաստանից - Թաւրիզ։
Քաղաքական.—Ռուսիա և Պարսկաստան։ Գերմանիա։ Ռուսիան Միջին Ասիայում։
Հեռագրներ։
Բանասիրական.—Բանագողութիւն, հայհոյանք, քաղաքրութիւն։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 7 մայիսի, 1896 թ.

ԷԼԻ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Մարդ մատը միշտ ցաւոտ տեղն է գնում և ուրիշների մօտ իր հիւանդութեան մասին է խօսում անդադար, որովհետև յոյս ունի, թէ մէկը կարող է իր ցաւին դարման անել։ Որքան հիւանդոտ կողմեր ունենք, որոնց վրայից մամուլը չի հեռացնում իր մատը, բայց կարծես բժշկել և անյուր են դէպի մամուլի կոչը այն մարդիկ, որոնք միջոց ունեն և ձեռնհաս են հիւանդութիւններին դարման մատակարարելու։

Ո՞վ չգիտէ, թէ մեր հիւանդոտ կողմերից մէկն էլ քահանայական խնդիրն է, որը հակառակ մամուլի բողոքներին ու խորհրդածութիւններին, օրէցօր փոխանակ բարւոք վիճակի մէջ դրուելու, ժողովրդի համար դառնում է մի կատարեալ չարիք։ Թողնենք հենց մեր աչքի առաջ կատարուող յաճախակի ու բազմաթիւ ձեռնադրութիւնները. Էջմիածնից, Երևանից, Սևանից և այլ և այլ խուլ վանքերից ու գաւառներից անդադար լուրեր ենք ստանում, թէ տգէտ քահանաների թիւը աճում է հետզհետէ, թէ ֆուրգոններով տգէտներ են գալիս յիշեալ կեդրոնները և վերարկու հագած վերադառնում...։ Բայց թէ ինչ վարկ է պահանջւում այդ քահանայցուներից, ինչ պատրաստութիւն, ինչ ընդհանուր հրանգներով են առաջնորդւում ձեռնադրողները, այդ մասին ոչ որ մտածող չկայ, և ամեն մի պատահական աշխարհականին քահանայ դարձնող միակ վարկը առաջնորդների, յաջորդների ու նրանց դաշնակիցների կամքն է և ախորժակը։

Այժմ «համախոստական» կոչուած թղթի կարգը արդարացնող պատրաստակ բանիւ, տասնեակներով ձեռնադրում են տգէտներին և այնքան են բազմացնում այդպիսի քահանաների թիւը, որ եթէ դրութիւնը այդպէս շարունակուի, համոզուած ենք, որ շուտով նոյն այդ «համախոստականներով» ժողովուրդը կըպահանջի ձեռնադրողներից կրճատել իրենց աւելորդ քահանաների թիւը. և միթէ հենց այժմ էլ քիչ կան վերարկուաւորներ, որոնք անտեղ, անգործ թափառում են գիւղից գիւղ։

Մենք սրանով չենք ուզում ասել թէ քահանաների կարիք չունենք. քա՛ւ լիցի։ Այժմ աւելի, քան երբեք պէտք ունենք քահանաների, բայց իրենց կոչման բարձրութեան վրայ կանգնած քահանաների։ Լաւ քահանան ամենայն բան պէտք է լինի այժմ, նա կարող է ամփոփել իր մէջ մեր կեանքի առաջնորդութեան շատ ճանապարհների գիծը։ Նա բացի հոգևոր հայր հանդիսանալուց, պէտք է լինի ժողովրդի խորհրդատուն, ուսուցիչը, օրինակը, դաստիարակը։ Բայց այն բազմաթիւ ձեռնադրուած վերարկուաւորները, որոնց փաթաթում են ժողովրդի վզին, այդ պարտականութիւններից և ոչ մէկը չեն կարող կատարել, որովհետև պատրաստութիւն չունեն. նրանք տիրող ապականութեանը պէտք է աւելի նորից մատակարարեն և խաւարը աւելի թանձրացնեն։

Չենք զարմանում և չենք զայրանում այն բազմաթիւ տգէտների վրայ, որոնք քահանայութիւնը ամենահեշտ և ամենարդիւնաւոր արհեստը համարելով, ձգտում են ձեռք բերելու, ինչ միջոցով էլ որ լինի, որովհետև ամենասահմանափակ խելքի տէր մարդն էլ գիտէ չէ գոյութեան կռուից և հացի խնդրի համար միջոցներ որոնելու։

Չենք զարմանում և այն հոգևորականների վրայ, որոնք քահանայական ձեռնադրութիւնն իրենց եկամտի արդիւնաւոր աղբիւրներից մէկն են համարում, որովհետև այդ ճանապարհով են բարձրացել զանազան աստիճանների և այդ ուղղութեամբ է ընթացել նրանց ասպարեզական գործունէութիւնը։

Բայց ինչ ասենք ս. Էջմիածնին, որ տեսնում է կատարուող տխուր երևոյթները և սառը անտարբերութիւն է պահում. տեսնում է թէ ինչպէս առաջինները քահանայական կոչման են ձգտում իրենց հացը հեշտ միջոցով ձեռք բերելու, իսկ վերջինները չահագործում են եկեղեցու սուրբ խորհուրդը, և ներողամիտ աչքով է վերաբերւում դէպի այդպիսիները։

«Թագաւոր ոչ գիր միայն տացէ պարտիս, այլ և որոց եղև պատճառ ի կորուստ»։

ՎԱՂԱՄԵՌԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

> Եթէ զգոյն մահու հրեշտակ
> Անհուն ժպտով մինչէ իմ դէմ,
> Զօղեանան ցաւքս ու հոգիս՝
> Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ։
>
> Դուրեան։

Խաչումեանը մեռաւ.—ահա այն բոթաբեր լուրը, որ անհուն վիշտ ու սուգ պատճառեց մեզ։

Օտար երկնքի ու արևի տակ, հեռու հարազատների գրկից, զրկուած սրտակիցների գութ ու խնամքից՝ յաւիտեան թառամում է նա, որը ապագայի քաղցր յուսով տոգորուած, բարելաւ ըղձերով ու ազնիւ ձգտումներով լի սրտով՝ կարօտով սպասում էր այն ցանկալի օրուան, երբ գիտութեան նոր թևեր առած՝ պիտի թռչէր դէպի հայրենի երկիրը։ Նոյն կարօտով, նոյն վառ յոյսերով բաղձում էր և հայրենիքը իրենից անջատուած որդուն, որ գիտութեան ջահը ձեռին, ընտիր գաղափարներով սնուած պիտի գար ու լուսաւորէր նրա մութ խորշերը։

Սակայն անագորոյն մահը յափշտակեց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆԱԳՈՂՈՒԹԻՒՆ, ՀԱՅՀՈՅԱՆՔ, ՔԱՂԱՔՐՈՒԹԻՒՆ

Մեծապատիւ պարոն խմբագիր, խոնարհաբար խնդրում եմ «Նոր-Դար»-ի մէջ տեղ տալ իմ սոյն գրութեան, որ հերքումն է ինձ անուանարկելու համար արած մի անխիղճ գրպարտութեան։

Ինչքան էլ ժանձրալի լինի օրէցօր բըղխած լրագրական հայհոյանքներին պատասխանելը, բայց պէտք է։ Հայհոյանքը մի չարիք է, իսկ չարիքի դէմ պէտք է կռուել։ Իզուր չէ ժողովրդական առածը ասում. «Թուրքին մինչև չթակես՝ չի բարեկամանայ»։

Արդ, ինչպէս «Նոր-Դար»-ի № 51-ից իմացանք, պ. Ա. Յովհաննիսեանը, իւր վիրաւորուած անձնասիրութեանը բաւականութիւն տալու համար, բարեհաճել է մեր «Գրական զրոյցներ» խորագիրը կրող յօդուածները, որոնց սկզբի մի փոքրիկ կտորն է միայն լոյս տեսել, գրական գողութիւն կամ, ընդհանուր եւրոպական բառով, պլագիատ անուանել տալ իւր «Արձագանք»-ում։ Իսկ փաստ։—Չըգիտենք թէ նա ինչ փաստ է բերում, որովհետև «Արձագանք» չենք տեսել, բայց հաւատացած ենք, որ նա իւր հնաւանդ սովորութեամբ բաւականացած կըլինի միայն հայհոյելով։ Իսկ «Արձագանք»-ի ընթերցողներն էլ կըմտածեն թէ այդ թերթը հազար մի բան գիտի, որ մեր գրածն այդպէս բացարձակապէս անուանում է գրական գողութիւն։—Մենք էլ կասենք.—հայրաթ գիտի։ Տեսնենք թէ ինչ գիտի կամ, լաւ ևս, պիտի գիտենայ։

Այդ թերթը նախ այն պիտի գիտենայ, որ չգիտի թէ ինչ ասել է գրական գողութիւն։ Պ. Ա. Յովհաննիսեանը մոռացել է, որ Եւրոպայից հանրագիտական մեծ-մեծ բառարաններ է հետը տուն բերել և այդ բառարաններից երբեմն-երբեմն քաղուածքներ անել տալ «Արձագանք»-ի համար, և թերևս որոնց և, եթէ չենք սխալւում, միքանի անգամ գրական գողութեան կամ, մի բառով ասենք, բանագողութեան մասին՝ զի պ. Ա. Յովհաննիսեանը բանագողութեան մասին խօսել շատ է սիրում, ճիշտ այնպէս, ինչպէս գողը գողութեան մասին։

Տեսնենք թէ պ. Յովհաննիսեանի այդ փայփայած բառարանների մէջ ինչ է գրած բանագողութեան — պլագիատի դիմաց. «Այս (բանագող) անունը տըրւում է այն հեղինակին, որ [illegible]» (M. N. Bouillet, Dict. univ des Sciences, des lettres et des arts. 1896, բոլորովին թարմ, գրական մասի խմբագիրը, լաւ ևս վերաքննողը Սորբոնում գրականութեան պրոֆեսոր է, ուրեմն պիտի գիտենայ թէ ինչ ասել է գրական գողութիւն)։ Ուրիշ բառարանից. «Ուրիշի մըտածութիւնը իրեն սեփականելու, կամ մի հեղինակից [illegible], մի կամ միքանի մտածութիւնների դարձուածը [illegible] գործողութիւնը» կոչւում է բանագողութիւն (P. Larousse, Granq Dict. uniw du XIX-e siécle ֆրանսիական ամենից յայտնի հանրագիտական բառարանը, եթէ չհաշուենք մի նորը, որ դեռ հրատարակւում է)։ Ահա և հռչակաւոր Littré-ի բառարանում ինչ է գրած. «Բանագող (plagiaire) կոչւում է նա, որ մի երկից, [illegible] է մտածութիւններ, նշանաւոր արտայայտութիւններ կամ նոյն իսկ ամբողջ կտորներ»։ Նոյն տեղում բերած է և Վոլտերի հանրագիտական բառարանից. «Երբ մի հեղինակ [illegible] է, այդ գործողութիւնը կոչւում է պլագիատ»։ (Այդ սովորութիւնը «Արձագանք»-ի գլխաւոր յատկութիւնն է)։

Մի կողմ թողնելով այն, որ մեր «Գրական զրոյցներ» յօդուածի սկզբի մասում ոչ մի նորագիւտ կամ սակաւածանօթ գաղափար չկայ, որովհետև ամեն մի գրականութեան և ընդհանուր պատմութեան գրքի մէջ էլ կարելի է գըտնել նոյնը վերածնութեան, հումանիզմի և վերանորոգութեան մասին, մի կողմ թողնելով այդ, հարցնում ենք. ո՞ր հեղինակի մտածութիւնն ենք մեզ սեփականել և մեր գրուածքի ո՞ր կտորում յայտնել ենք թէ այս-ինչ կամ այն-ինչ գաղափարը մեզ է պատկանում և ոչ ուրիշներին, որոնցից մենք առնում ենք։ Միթէ կարելի է գողութիւն անել առանց ուրիշի ստացուածքն իրեն սեփականելու։

Մարդիկ ծնուած օրից իրենց հետ մտքեր ու գաղափարներ չեն աշխարհ բերում, այլ ստանում են յետոյ. հանճարեղ մարդիկ միայն արտադրում են նոր գաղափարներ, որոնք քանի նոր են, արտադրողի կամ ստեղծողի սեփականութիւնն են, բայց երբ հետըզհետէ ժողովրդականանում են, բոլոր մարդկանց «ընդհանուր ստացուածք» են դառնում։ Մենք մեզ համար գիտենք, որ մարդիկ ուրիշի գաղափարներից ու երկերից օգտւում են և անբան անասուն մնացած կըլինէին, եթէ օգտուած չլինէին, որ ոչ թէ մենք, այլ նոյնիսկ նշանաւոր ու սրամիտ գիտնականի մէկը, եթէ տարիների ընթացքում առանձնապէս չի ուսումնասիրած վերածնութեան, հումանիզմի և վերանորոգութեան պատմութիւնը, չի կարող իրենից նոր գաղափարներ յայտնել պատմութեան այդ մասում։ Իսկ եթէ նա ուզում է մեր հայ ընկերութեան (la société) պէս մի ընկերութեանը ծանօթացնել, ամփոփ գիտելիքներ տալ պատմութեան այդ շրջանի մասին, ինչ պիտի անի այդ պրոֆեսորը։ Հանելուկը շատ պարզ է, և նոյն իսկ ամօթ է ասել, որ նա պիտի ձեռքն առնի մի կամ մի քանի գրքեր իւր ընտրած նիւթի մասին, կարդայ, քաղուածքներ անի, ամփոփի, գրի դնի այնտեղ, մէջը տեղ-տեղ իւր սեփհական մտքերը, եթէ ունի, կամ բոլոր մարդկանց արդէն «ընդհանուր ստացուածք» դարձած մտքեր մտցնելով։

Այդպէս արել ենք և մենք։

Բայց դա բանագողութիւն է թէ չէ։

Դա և բանագողութիւն է և բանագողութիւն չէ։ Բանագողութիւն է, եթէ, մի փոքր շատ բան կայ՝ գրողն այդ փոքր բանն իւր գրքի մէջ յիշած չլինի։

Այդ փոքր բանն այն գրքերի անունները, այն աղբիւրներն են, որոնցից գրողը իւր գիրքը յօրինելիս օգտուել է։

Յիշեցիր աղբիւրները, դու այլևս բանագող չես, չյիշեցիր աղբիւրներդ, բանագող ես, որովհետև ուրիշինը լռելեայն քեզ ես յատկացնում։

Ահա այդ փոքրիկ բանի մէջ է, որ «Արձագանքը», խորամանկ աղուէսի պէս, փակեց նրա աչքերը, անյոյս չորացրեց հիւանդ երկրում տաղապրուածի բիւրաւոր ցանկութիւններն և դառն վշտով համակեց մեզ։

Նա, որ գիշեր-ցերեկ՝ սրտի հետ ազնիւ ձգտումներ կապած ձգնում էր իր հայրենիքին ծառայելու յուսով և առայժմ թեթև թևերով իր թարմ ու եռանդուն աշխատութիւններն էր նուէր բերում ազգին, այսօր չկայ, և նրա հոգին սաւառնում է մի ուրիշ աշխարհում, այն աշխարհում, ուր չկայ վիշտ ու տառապանք, յաւ ու կսկիծ։

Կեանքի արշալոյսը չվայելած՝ դէպի արևմուտք է խոնարհում իր արևը «Նոր-Դար»-ի աշխատակից-գինակից Խաչումեանը։

Մինչ մենք անձկանօք սպասում էինք նրա առողջութեան աւետիքը ստանալու, այսօր նրա յուղարկաւորութեան կոչնակի տխուր ձայնն է հնչում մեր ականջին։

Չկայ այլևս Խաչումեանը. սակայն նրա աշխոյժն ու եռանդը, նրա սիրով ու անխոնջ աշխատանքը, որ բարի նախանձ էր զարթեցնում մեր երիտասարդների սառած սրտերում, նրա տոկուն և շնորհալի ձգտումը դէպի վսեմն ու բարին, նրա օրինակելի սէրը դէպի ուսման բարիքները, — այս բոլորը կենդանի են և կարող են առաջնորդ հանդիսանալ մեր ներկայ երիտասարդութեան, այն երիտասարդութեան, որի ականջները քարացել են շարունակ [illegible], [illegible] գեղեցիկ բառերի կրկնութիւնից։

Գէորգեան ճեմարանն աւարտելով՝ գիտութեան այդ խորանի վեհ հիմնադրի շիրմի առաջ ծնկաչոք ուխտում է ծառայել ազգին և եկեղեցուն, այդ ուխտը իբրեն միակ նպատակ ընտրելով՝ ուսման ծարաւը յագեցնելու տենչով դիմում է դէպի հեռու արևմուտք։ Չորս-հինգ տարիներ ազգի և եկեղեցու ցաւերը բուժելու կարօտով տաչորուած՝ անդուլ քրտինք ու աշխատանք է թափում և այդ աշխատանքի փոխարէն ստանում է այն հողը, որ տանջում է նրան, այն արիւնը, որին զոհ է գնում և գեռահաս՝ սև գերեզման մտնում։ Մի խումբ ստակիցներով շրջապատուած, նրանց աղիողորմ արցունքները սրբելով՝ զրկւում է իր գարուն արևից շնորհալի Խաչումեանը։

«Հայրենի փուշն անուշ է քան օտարի վարդը»—ահա այն բառերը, որ մրմնջում են նրա գրչի գրած տողերը։

Ատլանդեան շքեղ ովկիանոսի ջրերի վրայ Մայր-Արաքսի պղտոր ալիքներն է յիշում ու երգում. Ամերիկայի սէգ լեռները դիտելիս կարօտակէզ աչքերը դէպի արևելք է շրջում և հայրենի Մասիսները յիշում. շքեղ ապարանքների ու յաւշարձանների մօտով անցնելիս հայրենի խրճիթն ու իր պապերի անարձան և անտապան շիրիմներն է յիշում. կրթուած և լուսաւոր աշխարհի ծնունդ ծանօթ ու բարեկամների հետ խօսելիս՝ հարազատ քոյրերի ու արիւնակից եղբայրներին է մտաբերում և նրանց գովեստը կարդում. կրօնների համաժողովում լուսաւորչահիմ նահատակ եկեղեցու փառքն ու փուշն է հանդէս բերում, ուր գնում է, հայի անունն է հնչեցնում, հայով հետաքրքրում և հային ծանօթացնում։

Ահա նրա գործունէութեան ճանապարհը. մի ճանապարհ, որով եթէ ընթանային դէպի օտար երկիրներ դիմող մեր երիտասարդ ույժերը, մենք նոյն քան անհամբեր կըսպասէինք նրանց վերադարձին երջանիկ օրերի յուսով։

Վաղաժամ մեր աշխատակցի ոսկրներին հանգիստ մաղթելով, դառն վշտերից հիւսած և արցունքով ցօղած մի փունջ ենք դնում նրա դագաղի վրայ։

Գնա՛ս բարեաւ, ազնիւ գործիչ, որ բարձր պահեցիր «Նոր-Դար»-ի դրօշակը. թող քո շնորհքն ու ձգտումներդ փայլ տան քո կեանքի շաւղով հետևողներին։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ձայն է ընկել, որ այս տարի անպատճառ ս. Միւռոն պէտք է օրհնուի թէ որքան ճիշտ է, չգիտենք, միայն եթէ խսկապէս լինելու է՝ լաւ կլինի որ այժմեանից սկսեն յայտարարութիւններ տալ հայոց թերթերին, որպէսզի հեռաւոր տեղերի եկողներն օր առաջ իմանան այդ մասին։

Խօսւում է նոյնպէս, որ եպիսկոպոսների ձեռնադրութիւն է լինելու։

—

Աղափիրեան սրբազանը, որ ցարդ վարում էր Ագուլիսի Թովմաս Առաքելոյ վանքի վանահայրութեան պաշտօնը, կոչուելով ս. Էջմիածին, ապրիլի 27-ին Մայր Աթոռն է հասել։ Իբրև լուր հաղորդում են մեզ, որ գեր. Աղափիրեանին են ուղարկելու Երևան փոխ-թեմակալի պաշտօնով, սակայն պէտք է ասել, որ Աղափիրեան սրբազանը շատ ծերացած է և հիւանդոտ։

—

Մեզ հաղորդում են, որ վճռուած ու որոշուած է Գէորգեան ճեմարանի ուսուցիչ վարդապետներին ուղարկել շարունակելու իրենց ուսումը, արտասահմանի և Ռուսիայի զանազան քաղաքներում. արդէն ճանապարհուած են Յուսիկ և Կոմիտաս, իսկ մնացած Եզնիկ և Բենիկ վարդապետները, ինչպէս լսում ենք, շուտով կըճանապարհուին. դրանցից միմիայն Կոմիտաս վարդապետի ուսման ծախքն է, որ խոստացել է հոգալ Թիֆլիսեցի պ. Ա. Մանթաշեանը։

—

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ.—Համբարձման հինգշաբթի օրը, Ս. Իջման տաճարի վրայ իր անդրանիկ պատարագը մատոյց նորընծայ Թէոդորոս (Թորոս Ջուղայեցի) քահանան և մայիսի 4-ին ճանապարհուեց դէպի Մանչեստր իր պաշտօնատեղին։ Այդ առթիւ Վեհափառ Հայրապետը մի օրհնութեան կոնդակ էլ յանձնել է նորընծային Մանչեստրի մեր հայ ազգայնոց համար։

—

Վեհափառ Հայրապետի կողմից Երևանի պ. նահանգապետին փոխադարձ այցելութեան է գնացել Սարգիս եպիսկոպոսը Նահապետ հայր սուրբի հետ միասին։

—

Մայիսի 7-ից Անդրկովկասեան երկաթուղու վրայ մարդատար գնացքները Թիֆլիսից Բաթում մեկնում են միայն առաւօտները, իսկ երեկոյեան գնացքներ չեն լինելու մինչև որ Գրակալի կայարանի վնասուած կամուրջը վերանորոգուի։

—

Մայիսի 1-ից ռազմա-վիրական ճանապարհի վրայ հանրակառքերի երթևեւեկութիւնը յարմարեցրած է Վլադիկավկազի և Անդրկովկասի երկաթուղիների գնացքերի ժամանման և մեկնման ժամերին. Նոր կարգադրութեամբ Թիֆլիսից մեկնում են՝ հինգ տեղ ունեցող կառքերը—առ. ժ. 7-ին (գիշերում են Մլէթում) և առ. ժ. 9-ին (գիշերում են Փասանաուրում), իսկ վեց հոգու տեղ ունեցող հանրակառքերը (օմնիբուս)—առ. 9 ժ. 30 ր. և երեկոյեան ժ. 7-ին (առանց գիշերելու)։ Վլադիկավկազից մեկնում են՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքերը առ. ժ. 7-ին (գիշերում են Մլէթում և առ. ժ. 9-ին (գիշերում են Փասանաուրում), իսկ վեց հոգու տեղ ունեցող հանրակառքերը—առ. ժ. 10-ին և երեկոյեան ժ. 7-ին (առանց գիշերելու։

—

Գաւառական ուսուցիչներն ու ուսուցչուհիները շարունակում են՝ զանգատներով դիմել մեզ իրենց անել դրութեան մասին։ Նրանցից շատերը ամիսներով ռոճիկ չեն ստացել, իսկ հոգևոր իշխանութիւնը մինչև այժմ ձեռնպահ է մնացել։ Միթէ իշխանութիւնը չի մտածում, որ այդ անել դրութեամբ նրանք մեղաւոր չեն և նրանց հաց է հարկաւոր։ Արդեօք, ժամանակ չէ՞ ռոճիկները հոգալ ու բաւարարութիւն տալ նրանց արդար պահանջին։

—

Ունգարիայի հազարամեակի յիշատակին Բուդա-Պեշտում ի ցոյց է դրուած գրաֆ Զիչիի Կովկասից և Միջին Ասիայից տարած անտիկ և ուրիշ հին առարկաների մի ժողովածու։ Ինչպէս յայտնի է, գրաֆ Զիչիի մեր կողմերում ճանապարհորդելու նպատակն էր մաջարների հետքեր գտնելը։ Այդ գրաֆն այն եզրակացութեան է եկել, որ մաջարների նախնական հայրենիքն եղել է Գամիրը, որտեղից նրանք անցել են Կովկասի հիւսիսային կողմերով և Սևծովի ափերով։ Չերքեզներին նա ցեղակից է համարում մաջարների։

—

«Նովոստի»-ի ասելով, մայիսի 5-ին, Պետերբուրգի համալսարանում մի հրապարակական դիսերտացիա պիտի պաշտպանէր կանդիդատ Գ. Խալաթեանը այս վերնագրով. «Հայկական վէպը Մովսէս Խորենացու պատմութեան մէջ. մասն I», որ նա ներկայցրել է հայկական գրականութեան մագիստրոսի աստիճան ստանալու համար։

—

Պետերբուրգից հեռագրում են, որ կերոսինի տեղափոխութեան համար երկաթուղու սակագները բաւական բարձրանալու են։

—

ՇԱՄԱԽՈՒՑ.—Ապրիլի 29-ին պ. գաւառապետը քաղաքային այգում ժողովի էր հրաւիրել հայերի, թուրքերի և մալականների միջից բարձր դասակարգին պատկանող մարդկանց։ Ժողովի նպատակն այն էր, թէ ինչպէս պիտի տօնել Նորին Կայսերական Մեծութիւնների թագադրութեան օրը։ Ժողովին նախագահում էր ինքը գաւառապետը. վճռեցին՝ թուրքերից հազար, հայերից երեք հարիւր, իսկ մալականներից հարիւր րուբլի ժողովել և այդ գումարով թագադրութեան օրը ճաշ պատրաստել դաշտում, զինուորների և ժողովրդի համար։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ.—Մեր աստուածապահ նոյեան քաղաքն ևս արտօնութիւն է ստացել ունենալ քաղաքային կըճատուած ինքնավարութիւն։ Մամուլի հեղինակաւոր ձայնը ընտրութիւնների վերաբերեալ ուրիշ քաղաքներում արդէն եղած սխալ քայլերն ու հետևանքները դատապարտեց. այս բոլորը դաս պէտք է լինի ամեն մի նոր ընտրութեան սպասող և ձեռնարկող հասարակութեան, բայց այդպէս չէ մեր Ջէհիզեան քաղաքում։ Գանձակի ընտրութիւնների խառնակիչ և խամոլ (աւելի լաւ է ասել—թղթամոլ) հայերի գաղինները, ինչպէս երևում է, հանգստութիւն չեն տալիս տեղիս հայ հասարակութեան մի «յայտնի» մասին։ Հայերն յատուկ աւերիչ «ես»-ը և խնամիութիւնն ունեն իրենց անձնուէր հետևողներն և ներկայացուցիչները։ Տեղիս թէ հայ, թէ թուրք բնակիչների մէջ մատների վրայ կարելի է համարել փոքր ի շատէ բարեխիղճ, եռանդուն և հանրական գործերին նուիրուած անձեր։ Առ այժմ հայերի կողմից միակ արժանաւոր ընտրելին աւագութեան համար համարւում է քաղաքիս ներկայ գլխաւոր պ. Մելիք-Բաբախանեանցը։ Թուրքերից իբրև թիկնածու խօսւում է տեղիս կալուածատէր Ջաֆար Գուլիխանի մասին, որի կողմն են և մի «դասաւ» հայ թղթամոլներ։ Որոգայթներն ու մեքենաները լաւ են լարւում, տեսնենք...։

Մինչ դեռ ամեն տեղից գրում են, թէ մահմեդական հոգևորականութիւնը մզկիթներում հոգեհանգիստ է կատարում հանգուցեալ մարդասէր շահի մահուան առթիւ, նոյնիսկ ամբողջ օրերով փակում են խանութները, տեղս ոչ մի այդպիսի շարժում չեղաւ, բացի ընդհանուր ափսոսանքից։ Մի բան երկար ու բարակ խօսակցութեան նիւթ դարձաւ քաղաքումս. այդ այն է, որ ապրիլի 23-ին երեկոյեան ժամը 6-ից պարսկական ձիւնապատ սարերի լանջերն և փէշերը սկսած Արաքսի ափերից ծածկուած էին հազարաւոր կրակներով (խարոյկներով), որը պարզ երևում էր քաղաքիս դրօսավայրից։ Ոմանք հաստատում էին թէ դա պարսկական կառավարութեան նախօրօք կարգադրու-

---

երկու անգամ է թակարդի մէջ ընկել։

Նա մոռացութեան է տալիս, որ մենք մեր յօդուածի հենց սկզբում, հենց բոլորովին գլխին յիշել ենք մեր աղբիւրները։

Այդ կտորն է.

«Մեր [illegible]» («Նոր-Դար» № 26)։

Ահա թէ որտեղ է «Արձագանքի» խոփ քարին առել։

Խոստովանեցէք, պարոններ, որ, մեզ անուանարկելու համար ձեր բոլոր եռանդից մղուած, երկու անգամ էք թակարդի մէջ ընկած։ Խոստովանեցէք, թէ չէ հայ ազգի մէջ ամենամեծ գողը ինքը «Արձագանք» թերթն է։

Ահա թէ ինչու։

Դուք ձեզ բանագող չէք համարում, թէպէտ ամեն օր ուրիշ լրագիրներից քաղելով լցնում էք «Արձագանքի» էջերը, որովհետև յայտնում էք աղբիւրները կամ լրագրի անունը տալով կամ ասելով. տեղական թերթերը, կամ մի թերթ, հաղորդում են. կամ ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի թերթերին, արտասահմանեան թերթերի գրուածով... և այլն. իսկ դուք ձեր բոլոր բարութեամբ մեզ բանագող էք անուանում, թէպէտև մենք յայտնել ենք մեր աղբիւրները, որ գլխաւորապէս ֆրանսիական հեղինակներ են, որոնց անուններն էլ կըկարդայիք, եթէ մի փոքր համբերութիւն ունենայիք։

Դուք ձեզ բանագող չէք համարում. հարկաւ, երբ ուրիշ լրագիրներից ու գրքերից արտատպում էք «Արձագանքում» և այնքան անխիղճ առատութեամբ, որ «Արձագանքն» ազատ կերպով կարելի է անուանել արտատպարան, ինչպէս և «Արձագանքի» խմբագրատունը, հիմա չգիտեմ, մի ժամանակ կոչւում էր Մարտիրոսեանի տպարան,—երբ մի ժամանակ Կ. Պոլսի «Արևելքն» էր «Արձագանքի» մէջ լոյս տեսնում, մի ուրիշ ժամանակ անգլիական և ռուսական թերթերը, հիմա էլ անշուշտ որևէ մէկը կամ միքանի ուրիշը,—երբ դուք լուրերի բաժնի մի անկիւնում, երբեմն նախընթաց համարի մէջ, դնում էիք մի լուր թէ այս ինչ համարում տպագրւում է այս ինչ լրագրից վերցրած կամ թարգմանած յօդուածը. տպւում էր յօդուածը և ոչ տակին, ոչ գլխին կար [illegible] բառը և կամ այն լրագրի անունը, որի պարզ յօդուածը վերցւում էր, — ինչպէս և ամբողջ թղթակցութիւններ, յօդուածներ և այլն։

Դա իհարկէ բանագողութիւն չէ. բայց դա փոքրիկ խորամանկութիւն է. դա ուրիշի մտածութիւնը գողանալ չէ, բայց դա ուրիշի փառքի հաշւով իր մեծութիւնը ծածկել է։ Դա [illegible] «անմեղ» համարուած հնարքներով ընթերցողներին, մանաւանդ մեր ընթերցողներին, որոնց յիշողութիւնը շատ թոյլ է, մոլորեցնել և կարծել տալ թէ «Արձագանքի» մէջ ինքնուրոյն յօդուած է տպագրւում։

Դուք բանագող չէք համարում Ստ. Պալասանեանին, որովհետև նա իր «Հայոց պատմութեան» յառաջաբանում յիշել է թէ իր աղբիւրներն են հայոց հին մատենագիրները և ֆրանսիական միքանի հեղինակներ, որոնցից ամբողջ հիւսել է իր պատմութիւնը։ Դուք բանագող չէք համարում և ոչ մի ուրիշ պատմութեան հայ թէ եւրոպացի հեղինակի, որովհետև նրանք իրենց յառաջաբանի մէջ կամ յօդուածների վերջում յիշում են իրենց աղբիւրները։

Դուք բանագող չէք համարում... բայց շատ հեղինակների դուք բանագող չէք համարում և իրաւունք չունիք համարելու, քանի որ նրանք իրենց գրուածքների մէջ իրենց աղբիւրները յիշում են. այժմ ինչպէս է պատահում, որ դուք մեզ բանագող էք անուանում, թէպէտև մենք յիշել ենք թէ մեր աղբիւրները ֆրանսիական հեղինակներ են, որոնց անունները յօդուածների վերջում կըտանէք։

Արդ, ասացէք, պարոններ, ինչ անուն են տալիս ձեր այդ արարքին, եթէ ոչ զրպարտութիւն, անուանարկութիւն, մի խօսքով շատ... գէթին։

«Արձագանքը» չ'մոռացել միքանի ամիս առաջ իր առաջեան դէմ գրած մեր մի նամակից ստացած [illegible], որ երևի շատ զօրեղ է եղել։ Ահա իր այդ դաղուած անձնասիրութեան մէջ մեզ մի կերպ անուանարկել է ուզեցել և ուրիշ բան չգտնելով բանագողութիւն է անուանել մի գրութիւն, որ եւրոպական գրականութեան մէջ ոչ թէ plagiat է կոչւում, այլ compilation։ Վերջին բառի համար պ. Մ. Նուպարեանն իր ֆրանս-հայ. բառարանի մէջ առաջարկում է [illegible] բառը, որ իսկ համապատասխանում է, որովհետև այդպէս կոչւում են գրութեան այն տեսակները, որ ուրիշների գրուածներից ու արտայայտած մտքերից օգտուելով, քաղուածքներ անելով են գրում։

Միջանկեալ նկատենք, այն՝ ինչը կազմում է «Արձագանքի» բովանդակութեան մեծ մասը։

Ահա թէ ինչ է գրած Լարուսի վերջում յիշած մեծ հանրագիտական բառարանում այդ տեսակի գրուածքների համար. այդ հաւաքածուն բաւական երկար է, բայց մենք մէջ կըբերենք գրեթէ ամբողջապէս, որովհետև կարևոր է։ Կարևոր է ոչ թէ պ. Ա. Յովհաննիսեանին մեր տուած պատասխանի համար, այլ մեր ընթերցողների համար, մեր գրականութեան մշակողների և այն ամենքի համար, որ գրիչ են ձեռք վերցնում մեր գրականութեանը ծառայելու։ Ինչ էք կարծում, մենք կարո՞ղ ենք ինքնուրոյն գրականութիւն ստեղծել այժմեան ներկայ դրութեամբ։ Ուրիշները գուցէ շատ բան են կարծում, բայց մենք գիտենք, որ չենք կարող այդ անել, որովհետև [illegible] —Ինչ, մենք մտածել չգիտե՞նք, հիմա [illegible] սպերը։ Եւ որպէսզի այդ սպերի պատուին շատ դիպած չլինենք, փութանք աւելացնելու, որ մենք մտածել գիտենք, բայց միայն խրար հայհոյելու, զրպարտելու համար, խրար վնասելու և ոչ թէ մի ինքնուրոյն գիրք շարադրելու համար։ Խնդիրը բացառիկ անհատների համար չէ։ Գիրք գրելու համար մենք դեռ երկար, շատ երկար Եւրոպայի առաջ պիտի չոքենք, սովորենք, գիտենք, շատ երկար ժամանակ է հարկաւոր մեզ, որ մեզանում մեր ուսումն ու գիտութիւնը ծաղկի։ Իսկ մեզանում դեռ ոչ թէ [illegible], այլ նոյն իսկ ուսումն ու գիտութիւն չկայ... Ահա թէ ինչու մենք պէտք է դեռ կարդանք ու կարդանք, թարգմանենք ու թարգմանենք, հարկաւ ոչ անխտրութեամբ, և ապա քաղաքենք ու քաղաքենք, որ նոր գուցէ թէ մի օր գրենք։

(Վերջը միւս անգամ).

Մ. Աբեղեան։

Պարիզ, ապրիլ 16/4

թիւնն է, որ երեք օր ապրիլի 23, 24 և 25-ին հրավառութիւն պիտի լինէր հանգուցեալ շահի 50-ամեակի տօնախմբութեան առթիւ, որ և կատարել են անմեղ գիւղացիք, չիմանալով որ չարագործների շնորհիւ շահի տրագիքական մահով, ուրախութիւնը սուգի է փոխուած, իսկ ոմանք ասում են, թէ դա նոր շահի գահ բարձրանալու տօնախմբութիւնն է։

— Մայիսի 2-ին, սաստիկ որոտմունքից յետոյ 1/4 ժամաչափ հաւկիթի մեծութեամբ կարկուտ տեղաց, որը սպիտակ հաստ շերտով ծածկեց գետինը։ Վնասը մեծ է լինելու։ Շարունակ անձրևում է։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I.

Յովհաննէս Խաչումեանի հիւանդութեան պատճառով, անցեալները միքանի բարեգործ մարդկանց դիմեցի, որ օգնութիւն հասցնեն հիւանդ ուսանողի առողջութիւնը վերականգնելու համար։ Բայց այժմ սոյն երկտողով յայտնելով յիշեալ մեծապատիւ պարոններին, հանգուցեալի ընկերներին և բարեկամներին, որ կարգադրուած է մի որոշ ժամանակից յետոյ Խաչումեանի դիակը Լայպցիգից փոխադրել Գանձակ, իւր հայրենի երկիրը, որի համար բաւականին ծախք է լինելու, խնդրում եմ, եթէ ցանկանում են, կարող են իրենց նպաստը ղրկել Գանձակ մեր անուամբ։ Հասցէս՝ Елисаветполь свящ Симеону Теръ-Хачатурянцъ.

Սիմէօն քահ. Տէր-Խաչատրեան։

Գանձակ, 6 մայիսի։

II.

Ձեռքերս դողում են, յարգելի պարոններ, որ երկտողս գրում եմ. այն թանկագին կորստի մասին, որը անփոխարինելի է բառիս բուն նշանակութեամբ։ Խօսքս սիրեցեալ Յովհաննէս Խաչումեանի մասին է, որի մահուան գոյժը, այսօր հաղորդեց «Նոր-Դար»-ը։

Այո, փոքր ի շատէ մտածողի համար՝ Խաչումեանի կորուստը մեծ է, շա՜տ մեծ, և մենք ձեզ հետ ի միասին՝ սրբտանց ողբում ենք այդ անգուգական երիտասարդի վաղահաս և անսպասելի մահը։

«Մեռաւ Խաչումեանը և հայութիւնը կորցրեց իւր շնորհալի և ապագայի համար յուսալի զաւակներից մէկը, որոնց թիւը [illegible] է»—կրկնում ենք ձեզ հետ և մենք։

Անուշաւան Արամեան։

Թիֆլիս, 7 մայիսի։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ, կիսամեայ պատկերազ. Ա. տարի, Ա. գիրք, 1896, Շուշի։

(Շար. տես «Նոր-Դար» № 79)։

Մեր առաջած տեղեկութիւնների համեմատ «Ազգագրական հանդէսի» հրատարակիչ պ. Ե. Լալայեանը աւարտել է Ներսիսեան դպրոցը, 1891 թուին գնացել է Շուէյցարիա, Ժընէվ, 1893 թուի ամառը վերադառնալով Կովկաս՝ մնացել է միքանի ամիս և օգնութիւն ստանալով Վեհ. Հայրապետի հրամանով Ներսիսեան դպրոցից, գնացել է շարունակելու։ 1894 թուին, ինչպէս լսեցինք, պարոնը կամեցել է Շուշում տեղ ստանալ արժ. Նահապետ վարդապետից, ու յետոյ՝ անցեալ տարի ուսուցիչ հրաւիրուեց Շուշի։ Մենք չկարողացանք իմանալ թէ ինչ մասնագիտութիւն է սովորել Ժընէվում այդ 2—3 տարիների ընթացքում և ինչ վկայական ունի. այսքանս միայն իմացանք և հարկ համարեցինք համառօտ յիշելու, որ ընթերցողը փոքր ինչ անձին ևս ծանօթ լինի։ Պարոնը Շուշում ֆրանսիերէնի և ընդհանուր պատմութեան ուսուցիչ է, որքան գիտենք։ Երբ այս ամենը լսեցինք, մեզ համար շատ զարմանալի եղաւ այն ամբարտաւանութիւնը, որ արտաշնչում է նրա յառաջաբանից. այդտեղ նա ասում է, որ բուլէական ազդեցութեան տակ չի ձեռնամուխ լինում այդ հրատարակութեան, այլ իւր «ճանաչողները գիտեն թէ որքան ժամանակից ի վեր փայփայել է այս միտքը և ո՛րքան արգելքների է յաղթել փոքր ի շատէ նախապատրաստուելու այս գործի համար»։ Այժմ նա իրեն նախապատրաստուած է համարում և «հանդէս է գալիս» նաև «իւր ոյժի վերայ վստահացած»։ Սակայն իսկոյն, ինքն էլ զգալով, ուղղում է իւր սխալը, ասելով, որ այդ ձեռնարկութիւնը անհատական գործ չէ և սոսկ մինի տաղանդից չէ կախուած, միայն թէ այդ խօսքերից յետոյ ցոյց է տալիս, որ իբր թէ ամբողջ «առաջաւոր դասը» ազգագրական գործ պէտք է կատարէ, այն էլ մի այն տեսակ ազգագրական գործ, որով գոյացած հանդէսը «կըդառնայ ժողովրդական կեանքի մի ճշմարիտ հայելի, մի շտեմարան, որտեղից վիպասանն իւր նիւթը կըվերցնէ ազգային վէպ ստեղծելու, լեզուաբանը՝ բառեր և ոճեր կըքաղէ ազգային լեզուն հարստացնելու, և ստորանալուց պահելու, հրապարակախօսն և հոգևորականն ազգի վէրքերը կըճանաչեն նրանց դարմանումը բարօքելու, բժիշկը նրա ցաւերը կըտեսնէ սպեղանիներ հասցնելու, ուսուցիչը մանկան ընտանեկան կեանքը կըմտնէ՝ այն բարեփոխելու, իսկ գիտնականը իւր նիւթը կըվերցնէ գծելու էվոլիւցիոնի օրէնքները»։ Մենք երբէք չենք կասկածում, որ մի լաւ խմբագրուած ազգագրութիւն կարող է այդպիսի նիւթեր տալ, սակայն չենք էլ կարող սպասել այդ ամենը այն ոյժերից, որոնք երևում են այս համարում։ Գրել կարդալ և շատ ու քիչ ուսումն հոտն առած լինելը դեռ բաւական չէ ազգագիր լինելու համար, այլ պէտք է գոնէ միքանի ուսեալ, զարգացած և առողջ տեսութիւններով կրթուած մարդիկ լինին, որոնք կարողանան թէ անխառ, սրատես աչքով տեսնել եղելութիւնը և թէ՝ տեսածը ուղղապէս նկարագրել ու գրել։ Բանն այն չէ, որ լինին մարդիկ ու նկարագրեն տեսածն ու լսածը, այլ պէտք է նրանք կարողանան տեսնել այնպէս, ինչպէս պէտք է, և լսել ու հասկանալ այնպէս, ինչպէս կըհասկանայ մի որոշ նախապատրաստութիւն ունեցած մարդը։ Այդ պատճառով ճշմարիտ գիտնականը ոչ թէ բախտախնդիր ճանապարհորդների պատմածների վրայ է հիմնում իւր տեսութիւնները, այլ ինքն իսկ ճանապարհորդում է և անձամբ վերստուգում, և շատուշատ անգամ նրա նկարագրածից բոլորովին այլ բան է դուրս գալիս։ Եղել է անգլիացի ճանապարհորդ, որ, ինչպէս պատմում է, Պարիզ գնալով և իւր կեցած հիւրանոցում շիկահեր աղախին տեսնելով, գրել էր թէ ֆրանսուհիները շիկահեր են։ Հէնց այսպիսի թեթևս և թերակատար մարդկանց գրութիւնները չէին պատճառ, որ գիտնականներից շատերը վայր ի վերոյ տեսութիւններ են կազմում նոյնիսկ մարդաբանութեան մէջ, որոնց նկատմամբ, ինչպէս կըտեսնենք՝ պ. Ե. Լալայեանը կոյր հաւատք է տածում։ Ուրեմն ոչ թէ գանգազան պատահական անձինք պէտք է էական նիւթեր մատակարարեն այս հանդէսին, այլ ինքը հրատարակիչը, եթէ այդքան նախապատրաստուած է, և կամ օրինաւոր խմբագրական ժողով պէտք է լինի, որ կարողանայ վերստուգել խառնափնթոր նիւթերը և խառնամիտ մարդկանց խառն արգիւնքները։

Պարոնը իւր նախաբանի վերջում դիմում է նաև հայ ժողովրդին, յորդորելով, որ նա բանայ իւր առաջ իւր սիրտն ու հոգին, և ինքը ձգտում է ժողովրդի իսկական պատկերը տալ, այսինքն թէ հոգեկան և թէ կեանքի պատկերը։ Այժմ տեսնենք թէ նա ո՛րքան և ինչպիսի ապագայ է խոստանում իւր այս մի հատորով։ Ի հարկէ այս առաջին քայլն է և մեծ ուշադրութեամբ ու զգուշութեամբ է արուած, այնպէս որ ամենալաւ ապացոյց է յետագայի որպիսութեան։ Այստեղ հանդէս են գալիս ընդամենը չորս գրողներ. դրանցից մէկը (Կրալէ) տալիս է Խծկոնքի համառօտ նկարագրութիւնը, ամն Քր. Օ. խօսում է կրակի ծագման մասին, ամն Լ. Բ. մի երկու թարգմանութիւններ և մնացածը հրատարակչինն է։ Խծկոնքը մի սովորական գրութիւն է, որի նմանները և աւելի լաւերը յաճախ լոյս են տեսել մեր ամսագրերի մէջ, «Կրակը» նոյնպէս մի առանձին ուշադրութեան արժանի բան չէ, մնում է մեզ խօսել մնացածի վրայ։

Խօսելով հրատարակչի գրութիւնների մասին մենք կըխօսենք նաև նրանց մասին, քանի որ դրանք էլ առանձին խօսելու արժանիքը չունին։ Պ. Ե. Լալայեանը սկզբում դրել է մի յօդուած «Համառօտ տեսութիւն հայ ազգագրութեան» սակայն ոչ թէ ինչպէս հայոց ազգագրութեան մասին է խօսում, այլ խօսում է յատկապէս Գողթան երգերի և նրանց յարակից պարերի վրայ։ Վերնագիրը պէտք է լինէր իսկապէս «Հայոց ազգագրութեան հնագոյն նիւթերը կամ նշխարները» կայլն։ Այս յօդուածը մի սովորական քաղուած է մինչև այժմ լոյս տեսած աշխատութիւններից, առանց սեփական որևիցէ տեսութեան կամ քննադատութեան, բայց և այնպէս մի որոշ կարգով վերնագիրների տակ է շարայարուած։ Իսկ նրա միւս ինքնուրոյն գրուածքը «Ջաւախքն» է, որ մի մանրամասն նկարագրութիւն է Ջաւախք գաւառի և եթէ չենք սխալւում՝ գլխաւորապէս Ախալքալաքի կեանքի։ Այս վերջին գրուածքը իբրև նկարագրութիւն շատ հետաքրքրական է և ցոյց է տալիս, որ պարոնը կարողութիւն ունի այդպիսի նիւթեր ժողովելու։ Ընթերցողն այստեղ կըգտնէ Ջաւախքի, գլխաւորապէս Ախալքալաքի վերաբերեալ շատ ու շատ տեղեկութիւններ, բայց թէ դրանք որչափ ճիշտ են, այդ մենք որոշել չենք կարող և թողնում ենք այդ երկրին բաւականաչափ ծանօթ անձանց որոշելու։ Սակայն մենք կըդառնենք փոքր ինչ յետոյ դրանց ընդհանուր ուղղութիւնը, որ մեզ այդ հարցը եզրակացնելու համար հիմնաքար կըծառայէ։ Իսկ նախքան այդ՝ միքանի խօսք ասենք այդ և միւս գրուածների արտաքինի մասին։

(Կըշարունակուի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

ԹԱՒՐԻԶ, 25 ապրիլի.—Տարիներով թմրած Թաւրիզն այսօր ընդհանուր ցնծութեան մէջ է։

Պարսիկ ժողովուրդը, որ մի շաբաթ առաջ պատրաստւում էր քարուքանդ անել կառավարութեան դուռը, այսօր ոգևորուած փառաբանում է իւր նոր միապետին ամենայն եռանդով։

Կառավարութեան մունետիկի արած յայտարարութեան համաձայն, բոլոր շուկաները լուսաւորւում են հազարաւոր ճրագներով և զարդարուած են բազմատեսակ գոյնզգոյն թանկագին կտորներով։

Պարսիկներն առաջին անգամն է, որ տեսնում են Թաւրիզում այսչափ շարժուն կեանք, կարծես մի շաբաթ առաջ եղած Թաւրիզը չէ։ Շուկաներից անցուդարձ անելն անհնարին է լինում ամբոխի բազմութեան պատճառով։

«Ամիր» կոչուող քարվանսարան, ուր գտնւում է պետական բանկը, եւրոպացիների և վաճառական հայերի մեծամասնութիւնը, առանձին ուշադրութիւն է գրաւում իւր թանկագին զարդարանքներով, մանաւանդ գիշերները, լուսավառութեան ժամանակ։ Թէև անճաշակ կերպով է զարդարուած, սակայն տասնեակ հազարներ է ծախսուած։

Պարսիկների ուրախութեան չափ չկար, երբ մունետիկի ուժգին ձայնը իմացրեց հարկերի թեթևացումը—100-ին 25 գիջում. բացի դրանից, մթերքները քիչ իջան իրենց գնից և մսի հարկը բոլորովին վերցուեց, այնպէս որ ամեն մարդ կարող է միս վաճառել առանց մի կոպէկ վճարելու կառավարութեան։

Նահանգապետ Էմիր-Դովլան և Թագաժառանգ Զահ-Սանթանան, ահա միքանի գիշեր է, որ շրջում են շուկաներում և դիտում ժողովրդեան։ Նահանգապետը երէկ երեկոյեան հայերին յայտնեց իւր շնորհակալութիւնը, որ հայերն էլ տօնում են և մասնակից են լինում պարսիկների ուրախութեան։

Նոր շահին կուղեկցեն մինչև Թեհրան ռուսաց և անգլիական հիւպատոսները։ Դեռևս յայտնի չէ, թէ երբ պէտք է շահը գնայ Թեհրան բազմելու հօր գահի վրայ։ Ատրպատականում գտնուող զօրքերին հրամայուած է, որ մինչև ամսոյս վերջը այստեղ լինին։ Զօրքը 3 մասի պէտք է բաժանուի. մի մասը պէտք է մի օր առաջ ճանապարհուի, մի մասը իրեն շահի հետ պէտք է գնայ, իսկ երրորդ մասը մի օր յետոյ պէտք է դուրս գնայ քաղաքից։

Եւրոպացիք զարմացել են քաղաքի խաղաղ դրութեան վրայ. և յիրաւի, զարմանալի է, որ մի այդպիսի անկիրթ ժողովուրդ կարողանում է, առանց ոստիկանների ներկայութեան, խաղաղ կենալ։ Սակայն այդ նրանից է, որ երբ մէկը միւսին հայհոյում է, միւսն էլ է հայհոյում, կամ մէկը հրում է միւսին, նա չի պատասխանում նրան բռունցքներով, այլ բաւականանում է հայհոյելով և շատ քիչ է պատահում, որ ծեծի դիմեն, որովհետև պարսիկները իրենց համար հայհոյանքներն էլ բաւական են համարում և միևնոյն ժամանակ բաւական զուարճանում։

Պալունի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ և ՌՈՒՍԻԱ. — «Neue Freie Presse»-ի աշխատակիցներից մէկը մի հետաքրքիր խօսակցութիւն է ունեցել Վիեննայի պարսից դեսպան հայազգի Նարիման խանի հետ։ Արդէն այն փաստը, - ասել է դեսպանը,—որ գահի փոփոխութիւնը Պարսկաստանում կատարուեցաւ կատարելապէս բարեյաջող կերպով, պէտք է համոզէ ձեզ, որ մեր երկրում կարգերն այնքան էլ վատ չեն, ինչպէս դեռ այսօրես պնդում էին եւրոպական մամուլի մի քանի խոշոր օրգաններ։ Միւզաֆֆար-էդդին յամենայն դէպս փոքր-ինչ աւելի եւրոպացի է, քան թէ էր նրա հանգուցեալ հայրը։ Որ նոր շահը հասարակ մարդ չէ, երևում է հէնց միայն այն բանից, որ նա Թաւրիզի նահանգապետութիւնը թողնում է դատարկ ձեռքերով, մինչդեռ նա կարող էր մեծ հարստութիւն կիտել։ Մի «պարսկագէտ», մատնանիշ լինելով այն բանի վրայ, որ նոր շահը փոքր ինչ թոյլ կազմուածք ունի, արդէն շտապել է յայտարարել, որ նա հիւանդ մարդ է, բայց առողջ լինելու համար կարելի է և հսկայ չլինել։ Նոր շահը կարող է պետութիւնը կառավարել ամուր ձեռքով։ Վիեննական թերթի աշխատակցի այն հարցին, թէ ինչ նշանակութիւն ունին Ֆարսում կատարուած անկարգութիւնները, դեսպանը պատասխանեց, որ դրանք թափառական ցեղերի սովորական անկարգութիւններ են և դրանց վարմունքով չի կարելի չափել նստակեաց բնակիչների քաղաքակրթութեան եղանակը, իսկ այդ բնակիչները խաղաղութիւն են պահպանում։ Ի վերջոյ թղթակցին ասաց. «Սպասում են, որ նոր շահի օրօք, որի համար ասում են, թէ համակրում է Ռուսիային, այդ պետութեան (Ռուսիայի) ազդեցութիւնը Պարսկաստանի վրայ աւելի կուժեղանայ»։ Դեսպանը պատասխանեց. «Ասացէք ինձ, ներկայումս Ռուսիան ո՛րտեղ մեծ ազդեցութիւն չունի։ Չէ՞ որ Ռուսիան ձեզ մօտ էլ, Եւրոպայում, մեծ ճարտարութեամբ է գործում։ Ռուսիայի ազդեցութեան շրջանը Բալկանեան թերակղզու վրայ աւելի ու աւելի ընդարձակւում է։ Շնորհիւ իւր հմուտ դիպլոմատիայի, Ռուսիան քիչ աջողութիւններ չի ունեցել Պարսկաստանում, մինչդեռ Անգլիան մեզ մօտ երբեմն անաջողութիւնների է հանդիպել, ինչպէս հանդիպել է Թիւրքիայում։

—

ԳԵՐՄԱՆԻԱ. —Գերմանական լրագրերը երկար յօդուածներ են նուիրում «խաղաղութեան յոբելեանին», ինչպէս անուանում են նրանք Ֆրանկֆուրտում հաստատուած խաղաղութեան դաշնագրութիւնը, որի քսանհինգամեակը տօնուեցաւ ապրիլի 28-ին (մայիսի 10-ին)։

1871 թ. փետր. 14-ին (26) Վերսալում ստորագրուեցան խաղաղութեան պայմանները երկարատև բանակցութիւններից յետոյ, որ տեղի ունէին գերմանացիների կողմից՝ իշխ. Բիսմարկի, գրաֆ Բրէյի, բարոն Վիխտերի և պրուսական մինիստր Ժոլլիի, իսկ ֆրանսիացիների կողմից՝ Թիէրի և Ժիւլ Ֆաւրի միջև։ Դաշնագրութեան գլխաւոր կէտերն էին՝ Էլզասի և Լոռէնի մի մասի զիջումն և հինգ միլիարդ պատերազմական ծախքերի վճարումը Գերմանիային։ Ֆրանսիական հաւատարմատարները պատրաստ էին վճարելու ոչ թէ հինգ, այլ տասը միլիարդ, միայն թէ Էլզասն ու Լոռէնը չտան Գերմանիային, բայց իշխ. Բիսմարկը, որ այն ժամանակ ղեկավարւում էր գլխաւորապէս Մոլտքէի ռազմագիտական դիտումներով. անողոք էր, ուստի Թիէրն ու Ֆաւրը ստիպուած էին ստորագրել Էլզասի ու Լոռէնի զիջման թուղթը, որ վերջանում է հետևեալ բառերով. «Գերմանական կայսրութիւնը այդ գաւառներին պիտի տիրէ յաւիտեան և կատարեալ իրաւունքներով։ Դաշնագրութեան լիակատար բնագիրն մշակուեցաւ Ֆրանկֆուրտում - Մայնի վրայ 1871 թ. ապրիլի 28-ին (մայիսի 10-ին)։

Ֆրանկֆուրտեան խաղաղութեան 25-ամեակին նուիրած յօդուածների մէջ գերմանական թերթերից շատերը այդ գործը համարում են մի փառաւոր գործ Գերմանիայի պատմութեան մէջ։ Ֆրանսպրուսական պատերազմի մասին խօսելով, «Koenigsberger Zeitung»-ն ասում է. «Վերջին ժամանակներս հրատարակուած էին բաւական կարևոր հաղորդագրութիւններ Ֆրանսիայի դէմ մղուած պատերազմի պատճառների մասին, և այդ հաղորդագրութիւնները հարկադրում են գերմանացիներին իրենց կարծիքը փոխելու այդ պատերազմի մասին։ Այժմ արդէն այլևս կարելի չէ պնդել, թէ պատերազմը այնքան անսպասելի կերպով ծագեց Ֆրանսիայի թեթևամիտ և կռուի դուրս կոչող վարմունքի պատճառով։ Բայց այդ բոլորն ամենևին չէ ոչնչացնում այն փաստը, որ գերմանացիների կողմից պատերազմն անհրաժեշտ էր և արդարացի։

«Խաղաղութեան յոբելեանին» նուիրած յօդուածների վերջին գերմանական լրագրերն առանց կուսակցութիւնների խտրութեան ցանկութիւն են յայտնում, որ խաղաղութեան բարերար հովանին դեռ երկար ժամանակ տիրէ Գերմանիայի և ամբողջ Եւրոպայի վրայ։

—

ՌՈՒՍԻԱՆ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ.—Մերվից մինչև Կուշկա շինուելիք երկաթուղու վերաբերմամբ «Times»-ի յայտնած երկիւղի առթիւ ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան բերան «Nord» թերթը հետևեալն է ասում.

«Այդ երկիւղը ոչ մի հիմք չունի։ Չը

նայելով ապագայ երկաթուղու ռազմական նշանակութեանը, այնուամենայնիւ չի կարելի նրան տալ այն բնաւորութիւնը, որպիսի հնաւորութիւն վերագրում են նրան Լոնդոնի վախկոտ մարդիկ։ Ինչպէս և միւս բոլոր երկաթուղիները, որ ռուսաց կառավարութիւնն անց է կացրել Միջին Ասիայում, այս նոր երկաթուղին էլ միմիայն նպատակ ունի սաստկացնել ռուսական սահմանի պաշտպանութեան սիստեմը Աւղանստանի և Հերաթի կողմից։ Ինչ վերաբերում է Հերաթի և Աւղանստանի դէմ յարձակողական նպատակներին, որպիսի նպատակներ վերագրում են ապագայ երկաթուղուն Լոնդոնի Սիտիի օրգանի հրապարակախօսները, այդպիսի մի միտք կարող էր ծագել միմիայն այն երկրի պետական մարդկանց և հրապարակախօսների գլխում, որը ձգտում է իր տիրապետութիւնները տարածել ի հաշիւ ամբողջ աշխարհի և մինչև անգամ իր սեպհական դաշնակիցների։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳՐՆԵՐ «ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մայ.—Մայիսի 5-ին վախճանուեցաւ կին-գրող Ժելիխովսկայա։

ՄՈՍԿՈՒԱ. — Մոսկուայում գտնուող լրագրողները, ուսումնականներն ու մամուլի ներկայացուցիչները ճաշ են տալիս ի պատիւ օտարերկրեայ մամուլի այն ներկայացուցիչների, որոնք Մոսկուա են եկած։

ՓՐԱՈՒՐ.—Նախագահ Ֆօրն այստեղ ժամանեց զինուորական շքախմբի ուղեկցութեամբ և սպասեց կայսերական գնացքի ժամանելուն։ Նախագահը կրում էր «Անդրէաս Նախակոչի» շքանշանը։ Երբ որ Կայսերական գնացքը հասաւ, բոլոր ներկայ եղողները գլխարկները հանեցին։ Նախագահը մըտաւ սալոն-կառքը և յարգանքով համբուրեց Թագուհի Մարիա Ֆեօդորովնայի ձեռքը։ Նորին Մեծութիւնը բարեհաճեց նախագահին ներկայացնելու Իւր Օգոստափառ Որդոց։ Թագուհին բարեհաճեց Ֆօրին առաջարկել Իւր զիմացը նստելու։ Յետոյ գնացքը շարժուեց Պանի ուղղութեամբ, որտեղից նախագահ Ֆօրը յետ կըդառնայ։ Կայարանում հաւաքուած ժողովուրդը Թագուհի Կայսրուհու սուգը յարգելու զգացմունքով միայն երեք անգամ գոչեց «Կեցցէ Ռուսիա»։ Ռուսները շնորհակալութիւն յայտնեցին գլուխ տալով։

ՊԱՆԻ.—Գնացքը Փրաուրից Պանի ուղևորուելիս Թագուհի Կայսրուհին ասաց, որ խորը զգացուած է ֆրանսիական պետութեան գլխի ցոյց տուած բարձր քաղաքավարութիւնից։ Նորին Մեծութիւնը նախագահին հաղորդեց, որ Ինքը հիացած է Ֆրանսիայի հարաւը ժամանելուց և այն բարեյաջող կլիմայի ազդեցութիւնից, որ ունեցաւ Իւր Օգոստափառ Որդոց վրայ։ Ապա Թագուհի Կայսրուհին Ֆօրին ներկայացրեց Իւր Որդոց և Իւր շքախմբի անդամներին, իսկ նախագահը ներկայացրեց թագադրութեան հանդէսներին ուղարկուող գեներալներին. դրա հետ միասին Բարեատինսկի և Գալիցին իշխաններին շնորհուեցաւ «Պատուաւոր լեգէոնի» շքանշանը։ Կայսերական գնացքը Պանի ժամանելուց յետոյ, նախագահ Ֆօրը ողջունեց և ցած իջաւ կառքից։ Թագուհի Կայսրուհին հրամայեց՝ նախագահ Ֆօրին և գեներալ Բուադեֆրին մի-մի վարդ տալ ի նշան մնասբարևի։ Կայսերական գնացքը ճանապարհուեցաւ «Կեցցէ Ռուսիա» ժողովրդի աղաղակներով։

Նախագահ Ֆօրի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ Թագուհի Կայսրուհին ոյժ չունեցաւ իւր յուզումը ծածկելու, երբ նա շնորհակալութիւն յայտնեց նրա հայրական այն ընդունելութեան համար, որ ցոյց տուեց Թագաժառանգին Նիցցայում։

ՆԻՑՑԱ. Թագաժառանգը «Զարնիցա» զբօսանաւով Վիլֆրանկուից Այաչիօ մեկնեց։

ԲԵՐԼԻՆ.—Մայիսի 4-ին, երեկոյեան պրուսական պրինց Հենրիխը յատուկ գնացքով Մոսկուա մեկնեց։ Մոսկուա գնացին նաև Դանիայի Թագաժառանգը, ռուսաց դեսպան գրաֆ Օստէն-Սակէն ամուսնու հետ։

ԴՐԵԶԴԵՆ. — Մայիսի 5-ին պրինց Գէորգը Մոսկուա մեկնեց։

ՀՌՈՄ. — Թագաժառանգը Մոսկուա մեկնեց։

ՍՈՒԱԿԻՄ.—Անյայտ մի աղբիւրից լուր տարածուեց, թէ խալիֆը վախճանուել է։

ԿԱՊՏՕՈՒՆ.—Հարաւ-աֆրիկեան հասարակապետութեան գործադիր խորհուրդը հաստատեց գերիներին աքսորելու վճիռը։ Նրանցից մէկը, Գրէյ, ինչպէս ասում են, խելագարուեց և իւր կոկորդը կտրեց։

Ազնուականների բանկի փոխառութեան մայիսի 1-ի վիճակահանութեան ժամանակ հետևեալ տոմսերը տարան հինգ հարիւրական րուբլի։

№ Տոմս. №№ սերիաների

1. 1431, 4696, 4697, 11459.
2. 1728, 1774.
3. 1349, 4713, 12936, 13979, 15863.
4. 3868, 4497, 9566, 9962.
5. 2868.
6. 1585, 13158.
7. 3154, 6007, 6150, 7740, 7788, 7953, 12163, 12420, 15885.
8. 1313, 1554, 7525, 10962.
9. 3810, 4820, 5292, 6303, 8672, 15259, 15732.
10. 1512, 2500, 2922, 9218.
11. 977, 5272, 14570.
12. 1005, 3407, 4431, 9954.
13. 4056, 10083.
14. 4331, 9815.
15. 2053, 2711, 3174, 5190, 6262, 6941, 10431.
16. 2014, 2159, 2233, 2498, 5592. 10271, 14407.
17. 280, 1793, 2211, 2768, 3346, 3887, 6556, 11837, 12773.
18. 570, 1373, 1909, 8953.
19. 5316, 6993, 7020, 8077, 8202, 10641, 10887, 11282, 13359.
20. 1392, 2175, 8398, 10773, 13227, 13479.
21. 3408, 3989, 7162, 10942,1 1067,
22. 293, 765, 2388, 3808, 4418, 5045, 5628, 13945, 14801.
23. 344, 3347, 4789, 4791, 5700, 6545, 10802.
24. 10663, 11571, 13235, 13743, 13900, 14352, 14486, 15370.
25. 2039, 2795, 3452, 4117, 5178, 5377, 14237, 14366, 15913.
26, 252, 363, 700, 1686, 4348, 6425, 6498, 12912, 15042.
27. 2986, 3362, 8090, 10707, 13255, 14699, 14911,
28. 4937, 8317, 11501, 12594.
29. 679, 6238, 9936, 15391.
30. 1701, 14537, 14613.
32. 4267, 9539, 12196, 12716, 15006.
33. 2712, 2811, 3601, 3749, 6515, 8711.
34. 1513, 3122, 3534, 5583, 12433, 13641, 14559.
35. 5267, 8844, 10637.
36. 7008, 9513, 12403, 12597, 14061, 14209, 14687, 15227.
37. 4162, 5211, 7575, 9531, 14578, 14900,
38. 1297, 4744, 12860.
39. 1963, 3696, 9199, 10118, 15864.
40. 1269, 2257, 7542, 10476, 12984, 13579. 14874.
41. 5200, 5410, 11840.
42. 520, 5275, 6227, 8795, 14562.
43. 512, 1761, 1873, 2385, 3447, 4477, 11988, 14309, 15445.
44. 2967, 4392, 7310, 7737, 9258, 13277, 14706.
45. 1822, 3157, 1154, 14202.
46. 903, 5299, 8906, 9652, 11247, 12665, 12801, 13503.
47. 109, 5245, 8285.
48. 1509, 3658, 4371, 7739, 10920, 12927, 15143.
49. 4935, 13107.
50. 18, 213.

Հանգած տոմսեր

7080, 5386, 5601, 15597, 10607, 14834, 147, 15039, 2942, 1229, 9083, 9338, 1892, 11122, 9187, 224, 8541, 3439, 3591, 805, 6796, 15911, 4530, 9228, 29, 4323, 12097, 5141, 14675, 5397, 4857, 9023 15153, 9774, 6523, 15997, 7562, 1419, 848, 1891, 10755, 3241, 8302, 10110, 3333, 15255, 742, 13163, 3479, 2754, 7071, 4822 5362, 5342, 10300, 9693, 7708. 6311. 316, 9117, 3116, 5742, 7081, 9330, 4731, 6504, 2253, 11153, 3147, 14512, 1037, 12073, 5524, 3683, 9655, 3720, 14570, 3655, 10316, 15803, 12959, 761, 4417.14448, 4231, 3687, 7299. 15527, 5780.

Խմբագիր հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը Բաքուից Թիֆլիս դուրս է գնում ցերեկուայ 2 ժ. 30 ր., Թիֆլիս հասնում է առաւօտեան 8 ժ. 21 ր.։ Թիֆլիսից Բաթում դուրս է գնում առաւօտեան 9 ժ. 30 ր., Բաթում հասնում է երեկոյեան 9 ժ. 45 ր.։

Մարդատար № 3 գնացքը Բաքուից Թիֆլիս դուրս է գնում գիշերուայ 11 ժ. 5 ր., Թիֆլիս հասնում է երեկոյեան 5 ժ. 50 ր., Թիֆլիսից Բաթում դուրս է գնում երեկոյեան 6 ժ. 50 ր., Բաթում հասնում է առաւօտեան 8 ժ. 15 ր.։

Մարդատար № 2 գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գնում առաւօտեան 9 ժ. 40 ր., Թիֆլիս հասնում է երեկոեան 9 ժ. 55ր., Թիֆլիսից Բաքու դուրս է գնում գիշերուայ 10 ժ. 50 ր., Բաքու հասնում է ցերեկուայ 4 ժ. 40 ր.։

Մարդատար № 4 գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գնում գիշերուայ 11 ժ. 20 ր., Թիֆլիս հասնում է ցերեկուայ 12 ժ. 25 ր.։ Թիֆլիսից Բաքու դուրս է գնում ցերեկուայ 1 ժ. 10 ր. Բաքու հասնում է առաւօտեան 7 ժ, 30 ր.։

Մարդատար № 7 գնացքը Թիֆլիսից Բորժոմ դուրս է գնում ցերեկուայ 3 ժ. Բորժոմ հասնում է երեկոյեան 8 ժ. 35ր.։

Մարդատար № 8 գնացքը Բորժոմից Թիֆլիս դուրս է գալիս գիշերուայ 1 ժ. 15 ր., Թիֆլիս հասնում է առաւօտեան 8 ժ. 15 ր.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Հարկաւոր է գործակատար հմուտ ԳԱԼԱՆՏԵՐԷՅՆԻ առևտրի գործում (специалистъ)։ Դիմել
БАКУ Бр. Малхасянцъ.
(447) 10—5.

!ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ!
Առողջապահական
ՈՍԿԵԲՈՐԱՅԻ-ԾԹՐԻՆԻ ՕՃԱՌ
Դեղագործ
Գ. Ֆ. ԽԻՐԳԵՆՍԻ
ոչնչացնում է մանրէը, արևից այրուածքը, դեղին բծերը, երանգները բշտիկները և ազդում է անկողով քերթելու դէմ։ Առաջարկւում է որպէս արգասաբեր անուշահոտ բարձր որակութեան օճառ։
Մեկտորի գինը՝ 50 կ., ½ կտորինը՝ 30 կ.։ Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում։
ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ բոլոր Ռուսիայի համար Գ Ֆ. ԽԻՐԳԵՆՍԻ մօտ, Մոսկուայում. ԴԵՊՕՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ դեղատնային ապրանքների առևտրի ընկերութեան Տուրինովի, պ. պ. Զուբովի, Աղմաւրովի դեղատներում։
(M.) 25—6

ТРЕБУЮТСЯ АГЕНТЫ для продажи выигрышныхъ билетовъ съ разсрочкой платежа и страхованію
Прос. адрес. банкирской конторѣ
СПБ. И. А. ШИФЪ, Гороховая, 13.
(M) 15—15.

АЛЬДЕХИДЪ ВЛАДІО
КРЕМЪ
Главны складъ въ Москвѣ.
у В. Кремеръ, Чижовское подвор.
Կաշին և դէմքը փափկացնելու համար
Малый флак. 80 к.
Больш. флак. 1 р.
МОЖНО ПОЛУЧАТЬ ВЕЗДѢ.
(M) 32—10

Ս. Պետերբուրգի „ՆԱԴԵԺԴԱ" ընկերութեան տնօրէն Մ. Ս. Եասիլեւսկի-Վօյնոն յայտարարում է պ. պ. փոխառականներին, որ Բաքու քաղաքում Ի Վ. ԱԺԱՐԻ Է ՀԱՆԴԻԱԾ հրդեհի պատճառած վնասից հաշուեհասութեան համաձայն ընկերութեան վրայ մնացած թղթերին և կանցելարիայի վերաբերեալ պարագաներ, մօտ 5000 րուբ. գումարի։
(461) 1—1

ГУСТАВЪ ШТЫРМЕРЪ
ПАЛЬМИРА
20 КОП. ОДИНЪ КУСОКЪ
50 КОП. ТРИ КУСКА
ВАРШАВА
(M.) 50 8

[illegible]

Գործակալութիւնս յանձն կ'առնէ պատրաստել աղօրիքի շէնքի և միքենաների ծրագիրներ նոր-գըրութեան և հին քարի գըրութեամբ։

Կըհայթայթենք ցամաքային միքենաներ, ցորենի և հաճարի նորաձև աղօրիքներու ամեն կարծիները և կըստանձնենք անոնց շինութիւնը։

Գործակալութիւնս իւր ծրագիրները խորհրդաւոր ճարտարապետներու քննութեան կ'ենայ յանձնել ի հարկին։

Դ Ի Մ Ե Լ

H. Pashaian et Courian, 12 Croydon Grove 12, West Croydon, London. 50—19

BATEAUX a VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET Cie

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

„Ն. ՊԱՔԷ եւ ԸՆԿ."

Կանոնաւոր և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷՅԼ երկու շաբաթը մի անգամ։

Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Պոլիս քաղաքները

Բաթումից դուրս է գալիս չորեքշաբթի, 15 (27) մայիսի «Մինգրելի» շոգենաւը, նաւապետ՝ Հէյտ։
Բաթումից Պարիզ հաղորդակցութեան առմասիները ասվորական գինուն ունին։
Ապրանք յանձնելու կամ ճանապարհորդութեան վերաբերեալ տեղեկութիւնները ստանալու համար դիմել՝
Բ ա թ ո ւ մ ո ւ մ—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՆՈՅԻՆ, Նաբերեժնայա։
Թ ի ֆ լ ի ս ո ւ մ—պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիոնի փողոց, քարվանս. Գէորգ աղայի
Բ ա գ ւ ո ւ մ—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կոլիւբակինսկայա հրապարակ։
Ն ո վ ո ռ ո ս ի յ ս կ ո ւ մ—պ. ԼՈՒԻ ՌՕՆՈՅԻՆ։
(392) 20—2

Тифлисъ Доз. цензурою 7-го Мая 1896 г.
Տպարան Ա. Մելիք-Հահնազարեանցի։
Типогр А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковный домъ